

## ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹԱՄԱՆՅԱՆ

(Մենդյան 100-ամյակի առթիվ)

Լ. Ս. ԶՈՐՏԱՆ

«Իմ բոլոր աշխատանքներում, սկսած 1923 թվականից, ես ջանացել եմ օգտագործել անցած դարերի կուլտուրական ժառանգությունը: Ես ձգտել եմ գտնել այնպիսի ձևեր, որոնք համապատասխանեն երկրի կլիմայական պայմաններին և բնությանը, ինչպես և արտացոլելու Հայաստանի ժողովրդական ստեղծագործությունը:

Այս աշխատանքներում ես ձգտել եմ գտնել աղգային ճարտարապետական ձևի և սոցիալիստական բովանդակության միասնության լուծումը»<sup>1</sup>:

Այսպես է գրել Թամանյանը Հայաստանում կատարած իր ստեղծագործական աշխատանքի մասին, մահվանից մոտ մեկ տարի առաջ, 1935 թ.:

Մեծ ճարտարապետի այս հակիրճ խոսքը, որ մի շարք հանգուցային խնդիրներ է ընդգրկում, շատ կարևոր է՝ ըմբռնելու և գնահատելու նրա ստեղծագործությունը, որով մի նոր դարապլուրի սկսվեց հայ ճարտարապետության մեջ:

Սոսկ ճարտարապետ հասկացությունը բավարար չէ բնորոշելու Թամանյանին, այնքան մեծ է նրա դերը և այնքան լայն է նրա ստեղծագործության նշանակությունը ոչ միայն հայ ճարտարապետության, այլև հայ արվեստի և մշակույթի համար:

Թամանյանը Հայաստան եկավ որպես մի արվեստագետ, որն իր կառուցումներով և գործունեությամբ հռչակվել էր նախահեղափոխական Ռուսաստանում և ճանաչվել որպես այդ ժամանակաշրջանի ականավոր ճարտարապետներից մեկը: Կրթությունը ստացել էր Պետրոգրադի Գեղարվեստի ակադեմիայում, ուր ընդունվել էր 1898 թ. քսանամյա հասակում, և ավարտել՝ 1904 թ.: Ավարտելով ակադեմիան, Թամանյանը սկսում է ստեղծագործական ինքնուրույն բեղմնավոր գործունեություն:

XX դարի 10-ական թթ. Ռուսաստանի պատմության մեջ հայտնի են որպես մի ժամանակաշրջան, երբ արագ զարգացող տնտեսական հարաբերությունները ազդակ եղան նոր տիպի արտադրական, առևտրական, բնակելի շենքերի առաջացման համար, շինություններ, որոնք խնդիր էին դնում գտնել նոր ծավալատարածական լուծումներ, կոնստրուկտիվ սիստեմներ, արտահայտչական միջոցներ: Այդ ժամանակաշրջանը բնորոշ էր նաև ճարտարապետության և արվեստի ասպարեզում որոնումներով և մի շարք նոր ուղղություններով ու հոսանքներով (մոդեռն, զանազան ոճավորումներ, էկլեկտի-

<sup>1</sup> «Ալեքսանդր Թամանյան. հոգվածներ, փաստաթղթեր, ժամանակակիցները նրա մասին», Երևան, 1960, էջ 49:

կա. մոդեռնացված կլասիկա, ռացիոնալիզմ և այլն), որոնք խախտել էին կալուստացած և սովորական դարձած պատկերացումները:

Այս պայմաններում մի խումբ երիտասարդ ճարտարապետներ՝ Ա. Շչուսևը, Ի. Ֆոմինը, Ի. Ժոլտովսկին, Վ. Շչուկոն, որոնք հետագայում այլ վարպետների հետ սովետական ճարտարապետության հիմնադիրները ևղան, իրենց ստեղծագործություններում հիմնականում հետևում էին դասական ճարտարապետության սկզբունքներին և ռուսական կլասիցիզմի ավանդներին: Նրանց գործերում դասական ավանդները մեծ մասամբ մեկնաբանվում էին նորովի, իսկ ճարտարապետական ձևերը մշակվում էին գեղարվեստական մեծ վարպետությամբ: Այս խմբի ճարտարապետների ստեղծագործությունը նախահեղափոխական Ռուսաստանի արվեստի նշանակալի երևույթներից մեկը եղավ:

Բամանյանը հարում է այս խմբին և շուտով դառնում նրա ինքնատիպ և ակնառու գեմբերից մեկը: Բամանյանի այդ խմբին հարելը օրինաչափ երեւույթ էր: Նրա համար դասական արվեստի սկզբունքներն ու ավանդները միշտ էլ ելակետ ու հիմք եղան, սակայն նա երբևէ գերի չեղավ այդ ավանդներին, այլ ստեղծագործական խիղախումներ կատարեց, որոնց ու ստեղծեց նոր ձևեր, արտահայտչական նոր միջոցներ:

Բամանյանի ստեղծագործական գործունեության առաջին տարիները կապված էին Պետերբուրգի հետ: 1906 թ. նա նախագծում է մի բնակելի տուն, փայտից իրականացվելիք կառույցներ՝ եկեղեցի դպրոցի հետ և երկու առանձնատուն: Ավելի վաղ, 1904—1906 թթ. Բամանյանը վերակառուցում է Պետերբուրգի հայկական եկեղեցին, որը կառուցվել էր XVIII դարի վերջին, ճարտարապետ Յու. Ֆելտենի նախագծով: Դա Բամանյանի առաջին ինքնուրույն աշխատանքն էր և տեխնիկական ու ինժեներական մի բարդ խնդիր: Երիտասարդ ճարտարապետը հաջողությամբ ավարտեց աշխատանքը, իսկ նրա նախագծով իրականացված եկեղեցու մետաղաձուլը նոր դուռը ի հայտ բերեց արվեստագետի նրա ձիրքը:

Բամանյանի վաղ աշխատանքներից է նևսկի պողոտայի «Cafe de France»-ի ներքին ձևավորումը (1907 թ.): Այդ աշխատանքը նա իրականացրել է ճարտարապետ Վ. Շչուկոյի և նկարիչ Ն. Լանսերեի մասնակցությամբ, սակայն զօալի դերը Բամանյանինն է: Սրճարանը այսօր չկա: Ժամանակակիցները իրենց հուշերում դա համարում են Բամանյանի առաջին հաջողություններից մեկը:

Հետագա տարիներին (1909—1911 թթ.) Բամանյանը Պետերբուրգում և Ռուսաստանի այլ քաղաքներում կառուցում և վերակառուցում է մի շարք շենքեր, որոնցից աչքի է ընկնում Յարսկոյե Սելոյում (այժմ՝ Պուշկին) կառուցված առանձնատունը, որը հմտորեն ներգծված է ճարտարապետական այդ նշանավոր անսամբլի մեջ: Առանձնատան ներքին տարածությունները լուծված են հարմարավետ և տարածականորեն շատ արտահայտիչ: Շենքի ծավալներն ու հարթությունները մշակված են ռուսական կլասիցիզմի ճարտարապետության ձևերի ինքնուրույն մեկնաբանությամբ: Առանձնատունը բոլոր կողմերով արդեն վարպետի գործ է:

<sup>2</sup> Л. А. Ильин, Мастера архитектуры—В. А. Шуко, «Архитектурная газета», 1937. № 10.

Թամանյանի ստեղծագործության մեջ մի առանձին տեղ ունեն Յարոսլավլում կառուցված (1913 թ.) ցուցահանդեսի տաղավարները: Այստեղ մի նոր կողմից են բացահայտվում երիտասարդ ճարտարապետի կարողությունները. վարպետորեն, ստեղծագործական վերամշակումով կիրառելով ուսա ժողովրդական ճարտարապետության ձևերը, Թամանյանը ստեղծել է գունագեղ, ուսական հին քաղաքների հրապարակ հիշեցնող փայտաշեն մի համալիր: Թամանյանի ստեղծագործության մեջ ժողովրդական ճարտարապետության հանդեպ նրա այս վաղ հետաքրքրությունը առանձնահատուկ նշանակություն ունի:

1911—1913 թթ. Մոսկվայի նովինսկի բուլվարում (այժմ՝ Չայկովսկու փողոց) Թամանյանը կառուցում է մի շենք, որտեղ պիտի լինեին տանտիրոջ՝ իշխան Ս. Շչերբատովի հարկաբաժինը և վարձու տրվելիք շատ բնակարաններ: Այս տունը (նկ. 1) նոր էր իր ծավալատարածական լուծումներով: Նորովի էին մեկնաբանված դասական ճարտարապետական ձևերը և արտահայտչական միջոցները: Բարձր վարպետությունը առկա է ինչպես շենքի ծավալների ու հարթությունների մշակման,




այնպես էլ ներքին տարածությունների հարդարանքի աշխատանքներում: Թամանյանի կառուցած այս շենքը հանդիսանում է նախահոկտեմբերյան ուսական ճարտարապետության լավագույն գործերից մեկը և որպես այդպիսին 1914 թ. Մոսկվայի քաղաքային դումայի հայտարարած լավագույն տների մրցույթում պարգևատրվել է ոսկե մեդալով: Նույն թվականին, ճարտարապետի կոչում ստանալուց տասը տարի հետո, Գեղարվեստի ակադեմիայի ընդհանուր ժողովը Թամանյանին ընտրում է ճարտարապետության ակադեմիկոս:

1910-ական թթ. Թամանյանը նախագծել է մի շարք հետաքրքիր շենքեր, որոնցից միայն մի մասն է իրականացվել: Սրանցից աչքի են ընկնում Մոսկվա—Կաղան երկաթգծի հիվանդանոցային կոմպլեքսը Պրոզորովկայում (այժմ՝ Կրատովո, 1913—1918), նույն տեղում երկաթգծի ծառայողների ավանը (1913 թ.), Մոսկվայում՝ Ֆիրսանովայի առանձնատան ներքին ձևավորումը, ինչպես այս վերջին, նույնպես և մյուս շենքերը (Ցարսկոյե Սելոյի առանձնատունը, Շչերբատովի տունը և այլն) ներքին տարածությունների մշակումով Թամանյանը հայտնի է դառնում որպես ինտերյերի հմուտ վարպետ:

Հետաքրքիր է ճարտարապետի վաղ շրջանի շիրականացված նախագծերից մեկը: 1908 թ. ակադեմիկոս Ն. Մառը Թամանյանին հանձնարարում է

նախագծել թանգարան Անիի համար, ուր ինքը պեղումներ էր կատարում: Այս նախագիծը ինչ-ինչ պատճառներով չի ավարտվում ու իրականացվում, սակայն նախնական նախագիծը ցույց է տալիս, որ իր գործունեության առաջին իսկ տարիներից Թամանյանը հետաքրքրվել է հայ ճարտարապետության ժառանգությամբ, մեր պատմական ճարտարապետության ավանդներով, փորձել է ստեղծագործաբար մոտենալ այդ ավանդներին:



նկ. 1

Ստեղծագործական աշխատանքին ղուգահեռ Թամանյանը գործուն մասնակցություն է ունենում ժամանակի հասարակական կյանքին: Ընչպես վկայում են ժամանակակիցները, Պետերբուրգում, ճարտարապետների ընկերությանը կից, նա կազմակերպում է շինարար բանվորների որակավորման դասընթացներ, աշխատում է արվեստի հուշարձանների պահպանության հանձնաժողովում, մասնակցում է հին Պետերբուրգի թանգարանի ստեղծմանը, ճարտարապետների ընկերության տարեգրքի և շաբաթաթերթի խմբագրման աշխատանքներին և այլն:

1910-ական թթ. երիտասարդ Թամանյանի անունը, որպես ըստ ամենայնի շնորհալի ճարտարապետի, արդեն հայտնի էր ճարտարապետական և գեղարվեստական շրջաններում, նրա աշխատանքները ներկայացվում են ցուցահանդեսներում, տպագրվում են հեղինակավոր պարբերականներում:

1917 թ. Թամանյանը համառուսական Գեղարվեստի ակադեմիայի խորհրդի նախագահ է, Ակադեմիայի վիցե-պրեզիդենտի իրավունքներով: «Այդ պոստում Ալեքսանդր Իվանովիչի գործունեությունը, որ իսկապես հիանալի էր, ցույց տվեց խոշոր կազմակերպչի նրա ընդունակությունները»<sup>3</sup>, — գրում

<sup>3</sup> А. В. Щусев, Выдающийся зодчий, «Дружба» (сборник), Ереван, 1960, т. II, էջ 421:

է Շչուակը: Նույն տարին նա ընտրվում է Արվեստի գործերի խորհրդի նախագահ:

Դեռևս ուսանողական տարիներից սկսված բարեկամությունը Վ. Շչուկոյի, իսկ այնուհետև՝ Ա. Շչուակի, Ի. Ֆոմինի, Ի. Ժուլտովսկու և այլ նշանավոր արվեստագետների հետ, շարունակվեց հետագայում թե՛ Պետրոգրադում և թե՛ Թամանյանի Երևան փոխադրվելուց հետո: Ճարտարապետության և ընդհանրապես արվեստի հարցերում նրանց հայացքների ընդհանրությունն էր, առաջին հերթին, հիմքը այդ բարեկամության, որի մասին պահպանվել են ուշագրավ տեղեկություններ:

Թամանյանի նախահեղափոխական ժամանակաշրջանի գործերը թե՛ այն ժամանակ և թե՛ հետագայում բարձր գնահատվեցին և դասվեցին XX դարի սկզբի ռուս ճարտարապետության նշանակալի երևույթների շարքը:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո Թամանյանը, կուլտուրայի և գիտության առաջավոր գործիչների հետ, նվիրվում է նորաստեղծ սովետական պետության կուլտուրական շինարարությանը: Այդ տարիներին նա գործուն մասնակցություն է ունենում Ողբերգության թատրոնի կազմակերպմանն ու իրականացմանը, մի գործ, որը խրախուսել էր Մ. Գորկին: Այս թատրոնը նախաձեռնողներից և հիմնադիրներից մեկի՝ ՍՍՀՄ Ժողովրդական արտիստ Յու. Յուրևի հուշերում<sup>4</sup> կան ուշագրավ փաստեր այդ թատրոնում Թամանյանի կատարած աշխատանքի մասին: «Թամանովին անձնապես հետաքրքրեց, — գրում է Յուրևը, — մասսայական բեմադրությունների սկզբունքը, բեմադրություններ, որոնք, ինչպես նրան թվում էր, պահանջում էին նոր ձևեր, ընդհուպ մինչև ճարտարապետական նոր, հատկապես այդպիսի մասսայական ներկայացումների համար հարմարեցված շինությունները»: Թատրոնում աշխատելու ժամանակ, լինելով «Մակբեթ» ներկայացման ստեղծման մասնակիցը, Թամանյանը «իրեն բնորոշ ոգևորությամբ ղբաղվեց միանգամայն յուրօրինակ ճարտարապետություն ունեցող հատուկ շենքի նախագծով, որը պիտի բավարարեր թատրոնի՝ մեծ բեմադրությունների նոր տիպի թատրոնի պահանջները»:

Յուրևի այս վկայությունը կարևոր է Թամանյանի հետագա խոշոր կառույցներից մեկի՝ Երևանի օպերայի և բալետի թատրոնի շենքի մտահղացման ծագումը բացատրելու համար:

Հայաստանի Ժողովրդական կոմիսարների խորհրդի հրավերով 1923 թ. Թամանյանը գալիս է Երևան: Եվ այստեղ սկսվում է նրա ստեղծագործության նոր շրջանը:

Հայաստան գալով Թամանյանը, դժվարին պայմաններում, ամբողջովին նվիրվում է երկրի վերակառուցմանն ու շինարարությանը, ծավալելով արտակարգ բեղմնավոր, եռանդուն գործունեություն:

1923 թ. մայիսին նա Ժողկոմխորհի նախագահին ներկայացնում է մի ղեկուցագիր<sup>5</sup>, ուր խորաթափանց և հեռատես մոտեցումով դնում է այն կարևոր խնդիրները, որոնք անհրաժեշտ էին Հայաստանում ճարտարապետական-շինարարական գործը կազմակերպելու և ծավալելու համար: «Անհրաժեշտ է նշել, — գրում է Թամանյանը, — որ ավել կամ պակաս շափով լուրջ

<sup>4</sup> Ю. Юрьев, Записки, М.—Л., 1948, էջ 505—506:

<sup>5</sup> «Ալեքսանդր Թամանյան...», էջ 15—18:

ու պլանաչափ շինարարություն այս տերիտորիայում մինչև այժմ չի եղել: Հայաստանը, որ այն ժամանակ եղել է մեծ պետության լուրջ հեռավոր մի գավառ, որևէ լուրջ տեղ չի գրավել նրա պետական շինարարության ընդհանուր պլաններում... Այն ժամանակ կատարված բոլոր աշխատանքները չեն տվել քիչ թե շատ շոշափելի արդյունք Հայաստանի կուլտուրական շինարարության իմաստով, ընդհակառակը, ամենուրեք ղգացվում է լիակատար արհամարհանք ժողովրդի շահերի և ազգային կուլտուրայի հանդեպ»<sup>6</sup>:

Զեկուցագիրը ներկայացնելուց երկու շաբաթ շանցած, Հայաստանի ժողովուրդի կից կազմակերպվում է Գերագույն տեխնիկական բաժին, որին առաջադրվում են բոլոր այն խնդիրները, որ նշված էին ղեկուցագրի մեջ, իսկ ինքը՝ Թամանյանը նշանակվում է այդ բաժնի ղեկավար: Բաժինը ուներ գրեթե նույն պարտականությունները և իրավունքները, ինչ մեր օրերում՝ Պետշինը:

Երևանի վերակառուցումն ու շինարարությունը համարելով անհետաձգելի գործ, Թամանյանը առաջին հերթին ձեռնամուխ է լինում մայրաքաղաքի վերակառուցման հատակագիծը կազմելու գործին: «Քաղաքին հատկացված տարածությունը, — գրում է նա, — մի գեղեցիկ սարահարթ է հյուսիսից-հարավ հավասարաչափ թեքությամբ... արևը կլոր տարին լուսավորում է այն և դրանով նպաստում քաղաքի գեղեցկությանը, քաղաք, որի ծայրամասերը տեղադրված են ամֆիթատրոնաձև, շնորհիվ այն երեք կողմից երիզող սարալանջերի: Ընդհանրապես Երևանի տեղանքը շատ հնարավորություններ է տալիս ստեղծելու քաղաքի համար գեղեցիկ հեռանկարներ. Արարատը, Արագածը, Հրազդանի ձորը, Գետառ գետը և այլն»<sup>7</sup>:

Համաձայն նոր հատակագծի, քաղաքն ուներ ֆունկցիոնալ ղոնավորում. բնակելի թաղամասեր, արդյունաբերական շրջան, վարչական կենտրոն, ուսանողական քաղաքամաս, կուլտուրայի և արվեստի կենտրոն, թանգարանային թաղամաս և այլն: Նկատի ունենալով Երևանի կլիմայական պայմանները, Թամանյանը նախատեսել էր առատ կանաչապատում և ջրային տարածություններ:

Մայրաքաղաքի հատակագիծը նախատեսված էր 150 հազար բնակչի համար (1924 թ. Երևանը ուներ մոտ 60 հազար բնակիչ): Քաղաքի այսպիսի մեծացումը ժամանակակիցներից շատերին թվում էր անհավանական, սակայն կյանքը առաջ անցավ Թամանյան-քաղաքաշինարարի կանխատեսումներից:

Երևանի վերակառուցման 1924 թ. հատակագիծը առաջիններից մեկն էր սովետական քաղաքաշինության գործում և նշանակալից ներդրում՝ սովետական ճարտարապետության մեջ: Այս հատակագիծը հիմք հանդիսացավ քաղաքի հետագա բոլոր հատակագծերի համար:

Ավելորդ չէ նշել, որ Թամանյանն առաջին անգամ էր այդ ծավալի քաղաքաշինական-հատակագծային աշխատանք կատարում: Մինչ այդ, ինչպես ասվեց, նա վ. Սեմյոնովի հետ կազմել էր (1913 թ.) Մոսկվայի մոտ՝ Պրոզորովկայում, Մոսկվա—Կազան երկաթուղու ծառայողների ավանի հատակագիծը: Նախագծել է մի շարք կառուցվածքներ այդ ավանում, ինչպես նաև վերջինիս հիվանդանոցի համալիրը: Գրականության մեջ այս ավանը հիշ-

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 15—16:

<sup>7</sup> А. Таманян, О планировке гор. Эривани, տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1968, № 2, էջ 28:

վում է որպես Ռուսաստանի առաջին քաղաք-պարտեզը: Երևանի հատակագծում նույնպես Թամանյանը կիրառում է քաղաք-պարտեզի մի շարք սկզբունքներ:

Մայրաքաղաքի հատակագծի հաստատումից հետո (1924 թ. ապրիլի 3) սկսվեց քաղաքի վերակառուցումը և շինարարությունը: Սակայն Թամանյանը շարունակում էր հատակագծի հետ կապված աշխատանքները, մանրամասն մշակում նրա առանձին հատվածները՝ քաղաքի կենտրոնը, Լենինի հրապարակը, ուսանողական թաղամասը և այլն: Հետագա տարիներին (1929 թ. և 1932 թ.) ճարտարապետը ճշտում և կատարելագործում է Երևանի 1924 թ. հատակագիծը, պահպանելով նրա սխեման և սկզբունքները: 1934 թ. Թամանյանը ձեռնարկեց կազմելու «Մեծ Երևանի» հատակագիծը, որ նախատեսվում էր 500 հազար բնակչի համար, սակայն այդ գործը մնաց անավարտ:

Երևանի հատակագիծը Թամանյանի միակ քաղաքաշինական աշխատանքը չէ: 1925—1932 թթ. նա մշակում է Լենինական, էջմիածին, Նոր Բայազետ (Կամո), Ստեփանակերտ, Ախտա (Հրազդան) քաղաքների, Լուկաշեն, Նուպարաշեն (Սովետաշեն) ավանների և այլ բնակավայրերի հատակագծերը, որոնցից բոլորը չէ, որ իրականացվում են կամ մնում անփոփոխ:

Այդ տարիներին Թամանյանը զբաղվում է ոչ միայն ճարտարապետական աշխատանքներով: Հայաստան գալով նա նշանակվում է Ժողովրդական տնտեսական խորհրդին կից տեխնիկական-ծրագրային գործերի խորհրդատու: 1923 թ. կեսերին Ժողովրդական կից կազմակերպված Գերագույն տեխնիկական բաժինը 1924 թ. վերակազմվում և դառնում է Ժողովրդական տնտեսական խորհրդին կից Տեխնիկական հանձնաժողով, իսկ 1925 թ.՝ Պետպլանի շինարարական-արդյունաբերական սեկցիա: Այդ բաժնի ղեկավարը, իսկ հետո՝ հիշյալ հանձնաժողովի և ապա սեկցիայի նախագահը եղել է Թամանյանը: Այս ամենից բացի նա եղել է նաև Պետպլանի նախագահի տեղակալ: Ծանոթանալով նրա գլխավորած այդ հիմնարկների աշխատանքներին, տեսնում ենք, թե ինչքան բազմադան և բազմակողմանի է եղել Թամանյանի գործունեությունը. երկրի էլեկտրիֆիկացիա, ճանապարհների շինարարություն, մեխորատիվ աշխատանքներ, շինանյութերի արդյունաբերություն, ճահիճների շտրագում, ջրանցքների և հիդրոկայանների կառուցում, գյուղերի հատակագծում և շատ այլ հարցեր:

Երևանի հատակագիծը մանրամասն մշակելու և այն իրականացնելու աշխատանքները նկատի ունենալով հանրապետության Ժողովրդի 1926 թ. հատուկ որոշումով այդ գործը հանձնարարում է Թամանյանին, ազատելով նրան ամեն տեսակի այլ պարտականություններից: Եվ Թամանյանը, մշակելով ու կատարելագործելով հատակագիծը, առաջինն ինքն սկսեց իրականացնել այն: Շուտով քաղաքի տարբեր մասերում, հատկապես կարևոր հանգույցներում, սկսվում է նրա նախագծած շենքերի կառուցումը:

Ինչպես մեծ էրուզիցիայի և կուլտուրայի տներ, բազմազան հետաքրքրություններով օժտված արվեստագետ, Թամանյանը, իհարկե, չէր կարող անտաբեր մնալ իր ժողովրդի ճարտարապետական ժառանգության հանդեպ, որի համբավը վաղուց տարածվել էր Հայաստանի սահմաններից դուրս: Թեև միշտ ծանրաբեռնված բազմաթիվ գործերով, Թամանյանը կարողացավ կարճ ժամանակում ծանոթանալ հայ ճարտարապետությանը. նրա առջև բացվեց

ճարտարապետական մի նոր աշխարհ՝ սյարզ ու վսեմ դեղեցկությամբ, յուրահատուկ ձևերով, համարձակ ու սրամիտ կոնստրուկցիաներով, ներդաշնակ երկրի բնությանը: «...լեռների և անվերջանալի ժայռերի ու քարերի մեջ,— գրում է Քամանյանը,— առանձնապես ապշեցուցիչ են անցյալի ճարտարապետության սքանչելի հուշարձանները: Այս ասպարեզում հետաքրքիր շատ բան կա»<sup>8</sup>:

Քամանյանի այդ ծանոթացումը ինքնին մի ուսումնասիրությունն էր. արվեստագետի նրա սուր աչքը, նուրբ ճաշակը, ինժեների թափանցող, վերլուծող միտքը օգնեցին նրան տեսնելու, զգալու և ըմբռնելու հայ ճարտարապետության առանձնահատկությունները և օրինաչափությունները: Հայ ճարտարապետության նկատմամբ Քամանյանի հետաքրքրությունը մեծ արվեստագետի ստեղծագործական շահագրգռությունն էր, որ նոր ձևեր, նոր միջոցներ, նոր լուծումներ էր որոնում իր հայրենիքի նոր ճարտարապետությունը ստեղծելու համար:

Մինչև Քամանյանը եղել էին ժամանակակից կառույցներում հայ ճարտարապետական ժառանգությունը, նրա մոտիվներն ու արտահայտչական միջոցները օգտագործելու փորձեր, սակայն դրանք կա՛մ հին ձևերի ուղղակի կրկնություններ էին, կա՛մ ոճավորումներ:

1923 թ. Քամանյանը ժողովուրդին կից պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի նախագահ էր, և այս աշխատանքը, անտարակույս, մեծապես նպաստել է, որ նա մոտիվից ծանոթանա հայ ճարտարապետությանը: Այդ գործում, անշուշտ, կարևոր դեր է ունեցել կոմիտեի անդամ, բազմահմուտ գիտնական Թորոս Թորամանյանը:

Քամանյանը միաժամանակ բարձր գնահատեց տեղական շինանյութը՝ Հայաստանի բազմատեսակ քարերը: Նա Հայաստանում շինաքարի արդյունաբերության նախաձեռնողներից մեկը եղավ և իր առաջին իսկ շենքերում օգտագործեց Հայաստանի քարերը, բացահայտելով դրանց կարևոր հատկությունները և մեծ հնարավորությունները:

Մայրաքաղաքի հատակագծի աշխատանքների հետ միասին, Քամանյանը մասնակցում է (1923—1925) հիդրոտեխնիկական կառուցվածքների նախագծմանը և ղեկավարում է նրանց շինարարությունը: Ի դեպ, նկատենք, որ նա միշտ ինքն է ղեկավարել իր նախագծած շենքերի շինարարությունը և անհրաժեշտ է համարել, որ ամեն ճարտարապետ լինի հմուտ շինարար և դիտարկող ղեկավարը հանդիսանա շինարարական գործում:

1920—1930-ական թթ. Քամանյանը նախագծում և կառուցում է մի շարք շենքեր զխավորապես Երևանի ուսանողական թաղամասում (Անատոմիկումը, Աստղադիտարանը, Հանրային գրադարանը, Գյուղատնտեսական բարձրագույն դպրոցը, Անասնաբուժական, Ֆիզիո-թերապևտիկ, Պոլիտեխնիկական ինստիտուտները, բնակելի տուն Պուշկինի փողոցում և այլն), նախագծում է շենքեր նաև Հայաստանի այլ վայրերի համար (օդերևութաբանական կայան Արագածի վրա, Այդր լճի ջրհան կայանը), իր հատակագծով կառուցվող Լուկաշեն ավանում միահարկ բնակելի տներ, որոնք մասսայական շինարարության կառուցվածքների տիպայնացման առաջին փորձերից են:

<sup>8</sup> «Ա. Քամանյանի երկու նամակը», տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1969, № 3, էջ 125:

երևանում կառուցված շենքերում դասական ճարտարապետության ձևերը կիրառված են նորովի մեկնաբանությամբ և ինքնուրույն մոտեցումով: Սրանցից լավադույնները ստեղծված են մեծ վարպետությամբ:

Թե՛ այս և թե՛ այլ աշխատանքների և ընդհանրապես իր ողջ գործունեության համար Թամանյանին 1926 թ. մայիսին շնորհվում է ժողովրդական ճարտարապետի կոչում:


\* \* \*

1920—1930-ական թթ. մեր երկրում եղած ճարտարապետական խմբավորումները (ժամանակակից ճարտարապետների միավորումը՝ կոնստրուկտիվիստները, Պրոլետարական ճարտարապետների համամիութենական միավորումը) ձգտում էին նոր խոսք ասել ճարտարապետության մեջ և պայքարում էին նորարարության համար: Դրա հետ մեկտեղ անընդունելի էին համարում ավանդույթների և ժառանգության դերը նոր ճարտարապետության կազմավորման գործում: Նրանք (մանավանդ այդ խմբավորումներին Հայաստանում հարող ճարտարապետները) մերժում էին Թամանյանի ստեղծագործական ուղղությունը, անգամ պահանջում էին դադարեցնել նրա նախագծած շենքերի կառուցումը: Մական Թամանյանը մնաց հաստատակամ և շարունակեց գնալ իր բացած ճանապարհով: Նրան օգնում, խրախուսում և ստեղծագործական աշխատանքի լայն հնարավորություններ էին ընձեռում կուսակցական և պետական գործիչները, հատկապես Սարգիս Սրապիոնյանը՝ Լուկաշինը, Արամայիս Երզնկյանը, Սահակ Տեր-Գաբրիելյանը, մարդիկ, որոնք լինելով լայնախոհ և խորաթափանց ղեկավարներ, նպաստեցին սովետահայ ճարտարապետության կազմավորմանը 1920—1930-ական թթ. և նրա հետագա առաջընթացին:

Ավելի ուշ՝ 1930-ական թթ. սկզբներից քննադատվում են վերոհիշյալ խմբավորումների գործունեությունը և ստեղծագործական սկզբունքները: Դրա համար հիմք եղավ Սովետների Պալատի նախագծի համար համամիութենական մեծածավալ մրցույթը (4 տուր, 1931—1933 թթ.), որը յուրատեսակ քննություն եղավ ճարտարապետական բոլոր խմբավորումների համար: Բացի մրցույթից, այդ տարիների ճարտարապետական պրակտիկան ցույց էր տվել հիշյալ խմբավորումների ստեղծագործական ծրագրի միակողմանի, որոշ չափով հակասական բնույթը, նրանց գործերում ճարտարապետական մի շարք խնդիրների պարզունակացումը: Միաժամանակ, ակներև էր այդ խմբավորումների առաջադրած ճարտարապետական ձևերի, լուծումների և ժամանակի շինարարական տեխնիկայի հնարավորությունների միջև եղած անհամապատասխանությունը: Այս ամենը նախապայման հանդիսացավ, որ փոխվի ճարտարապետության ստեղծագործական ուղղությունը մեր երկրում: Այլ հիմնական հարցերի հետ մեկտեղ կարևոր դարձան անցյալի ժառանգության քննադատական օգտագործման, ինչպես նաև ճարտարապետության գեղարվեստական արտահայտչականության խնդիրները:

1932 թ. ապրիլին կուսակցության կենտկոմի որոշումով վերացվեցին գրականության և արվեստի ասպարեզում, այդ թվում նաև ճարտարապետության բնագավառում եղած բոլոր խմբավորումները և կազմակերպվեցին միասնական ստեղծագործական միություններ: Դրանով իսկ բարենպաստ պայմաններ առաջացան Թամանյանի ստեղծագործական գործունեության և Թամանյանական դպրոցի կազմավորման ու տարածման համար, քանի որ

ականավոր ճարտարապետի ստեղծագործական սկզբունքները իրենց շատ կողմերով համապատասխանում էին նոր պահանջների ոգուն: Դրվում էր դասական արվեստի սկզբունքների և ավանդների յուրացման խնդիրը՝ Թամանյանի ստեղծագործության համար դասական արվեստը հիմք և ելակետ էր. պահանջվում էր նախագծել տեխնիկապես կատարյալ և հարմարավետ կառուցվածքներ՝ Թամանյանի գործերը աչքի էին ընկնում նաև իրենց այդ կող-



Նկ. 2

մերով. կոչ էր արվում ստեղծելու բովանդակությամբ սոցիալիստական, ձևով ազգային արվեստ՝ Թամանյանի երկերը նոր տիպի, նոր բովանդակության կառուցվածքներ էին (Ժողտուն, Կառավարական տուն) և ազգային նոր ձևի հուշակալ օրինակներ. դրվում էր վարպետության բարձրացման խնդիրը՝ Թամանյանի ստեղծագործությունները ճարտարապետական բարձր վարպետության և գեղարվեստական մեծ ուժի գործեր էին: Այս ամենի հետևանքով և բնդհանրապես իր մեծ արժանիքների շնորհիվ Թամանյանի ստեղծագործությունը լայն ճանաչում ստացավ:

Թամանյանը որպես մեծ ստեղծագործող, որպես հայ նոր ճարտարապետության հիմնադիր ճանաչվեց և բարձր գնահատվեց իր այնպիսի աշխատանքներով, ինչպիսիք են Երևանի հատակագիծը, Երևանի առաջին հիդրոէլեկտրակայանի շենքը և հատկապես իր երկու մեծ ստեղծագործությունները՝ Կառավարական տունը և Օպերայի ու բալետի թատրոնի շենքը, ճարտարապետական գլուխգործոցներ, որոնք բախտորոշ նշանակություն ունեցան սովետահայ ճարտարապետության համար:

Հիդրոկայանի շենքը (նկ. 2) ճարտարապետության և բնության ներդաշնակության լավագույն օրինակներից է: Ճարտարապետությունը հարստացրել է բնությանը. իսկ բնությունը դարձել է ճարտարապետության համար հարազատ միջավայր: Թամանյանը խորապես զգացել է հայ ճարտարապետության այն առանձնահատուկ կողմը, որի մասին ինքը գրում էր. «Պետք է ընդգծել

բնության և շինանյութի խոշոր դերը ճարտարապետության ձևավորման մեջ, և այս տեսակետով մենք շենք կարող անտես առնել մեր պատմական ճարտարապետության բաղաձայնի գոհարները, որոնք ձևավորված են նույն բնության մեջ և նույն շինանյութից, ինչպես և մեր ժամանակակից կառուցումները»<sup>9</sup>։ Այս միտքը կարևոր է Թամանյանի ստեղծագործական մի շարք սկզբունքներ հասկանալու համար։

Հրազդանի ձորի ժայռեղեն միջավայրում, այդ ժայռերից մշակված քարով ճարտարապետը ստեղծել է իր ծավալով ոչ մեծ, արտադրական բնույթի մի կառույցվածք, որ առանձնահատուկ տեղ ունի նրա ստեղծագործության մեջ։ Թամանյանի հետագա ստեղծագործության մի շարք կողմեր առաջին անգամ բացահայտվել են հիդրոէլեկտրակայանի ճարտարապետական ձևերում։

Հիդրոէլեկտրակայանից մի քանի տարի հետո Թամանյանի նախագծով լենինի հրապարակում կառուցվեց Հողժողկոմատի շենքը, որով սկսվեց հրապարակի կառուցապատումը։ Վարպետի ստեղծագործության մեջ Հողժողկոմատի շենքը շատ ուշագրավ է ու կարևոր՝ անցյալի ժառանգությանը ստեղծագործական մոտեցման տեսակետից և մի նոր երևույթ է ճարտարապետական ազգային նոր ձևեր ու արտահայտչամիջոցներ ստեղծելու գործում։

Հայկական ՍՍՀ Կառավարական տան և Օպերայի թատրոնի նախագծումը Թամանյանը սկսեց իր մյուս աշխատանքներին զուգահեռ և մինչև կյանքի վերջը մշակեց ու կատարելագործեց դրանք։ Նա շարունակեց այդ աշխատանքը նաև շինարարության ընթացքում։ Սակայն մեծ ճարտարապետին վիճակված չէր ավարտել իր նախագծերի իրականացումը։ Այդ գործը վարպետությանմբ և բարեխղճությամբ կատարեց նրա որդին՝ ճարտարապետ Գևորգ Թամանյանը։

Կառավարական տունը (նկ. 3), ինչպես անունն է հուշում, հասարակական, պետական մեծ կարևորություն ունեցող շենք է՝ պետական բարձրագույն հիմնարկների աշխատանքի վայրը։ Ելնելով շենքի նշանակությունից, Թամանյանը ստեղծել է մոնումենտալ շինության մի արտահայտիչ կոմպոզիցիա։ Թեև Կառավարական տան հողամասում նա արդեն կառուցել էր Հողժողկոմատի շենքը, այնուամենայնիվ կարողացավ փոխել իր սկզբնական մտահղացումը և ստեղծել ծավալատարածական մի նոր շինություն, օրգանապես դրան միացնելով Հողժողկոմատի արդեն կառուցված շենքը, այնքան հաջող, որ այդ ամբողջը միասնականորեն մտահղացված շենքի տպավորություն է թողնում։

Համաձայն նախագծի, շենքի կենտրոնական մասում՝ բակում, շենքի մյուս մասերին կից, նախատեսված էր մի շրջանաձև բարձր ծավալ՝ կենտրոնական բաշխիչ վեստիբյուլը (այն ցավոք չի կառուցվել), որ Կառավարական տան բոլոր հարկաբաժինները կապելով իրար, մեծ դյուրություն ստեղծելով շենքի ներքին կազմակերպման գործում, ունենալու էր ծավալային նշանակալից դեր նրա տարածական կոմպոզիցիայում և կարևոր նշանակություն՝ քաղաքաշինական առումով։

Կառուցվածքի հանդիսավոր ու մոնումենտալ ձևերը համապատասխան-

<sup>9</sup> «Ալեքսանդր Թամանյան...», էջ 44։

նում են Կառավարական տան՝ երկրի պետական բարձրագույն իշխանության շենքի նշանակությանը:

Մեծ է Կառավարական տան ճարտարապետության հմայքը, անհնար է անտարբեր անցնել նրա կողքով. նա գերում է իր գեղեցկությամբ և վեհությամբ: Թեև իր կոմպոզիցիայով՝ բարդ (որ պայմանավորված էր տեղով) և իր ձևերով՝ բազմազան, Կառավարական տան ճարտարապետությունը ամբողջական է, միասնական: Դրան նպաստող կարևոր գործոններից մեկը, թերևս, հիմնականը՝ կոմպոզիցիոն և տեկտոնիկ նույն սկզբունքն է, որ կիրառված է բոլոր ճակատներում: Միաժամանակ ամեն ճակատ ունի իր տեղին, քաղաքաշինական նշանակությանը և շենքի տվյալ մասի բովանդակությանը համապատասխան մշակում: Երկրորդական փողոցում՝ պարզ, պլաստիկան զուսպ. հրապարակ մտնող փողոցներում՝ հարուստ, պլաստիկան հյութեղ. հրաշարակի մասում՝ ձևերը դառնում են ավելի մոնումենտալ, պլաստիկան խոր, առավել արտահայտիչ: Ճակատների հարդարանքի միջոցների հարստացմանը զուգահեռ ուժեղանում է ու աշխույժ է դառնում լուսաստվերը, որը շատ արտահայտիչ է հատկապես հրապարակի գոգավոր ճակատում:

Թամանյանը ընդհանրապես հմտությամբ է օգտագործել արտահայտչական տվյալ միջոցը, որը արևաշատ մեր երկրում մեծ հնարավորություն է ընձեռում ճարտարապետին: Կեսօրից հետո, մայրամուտին Լենինի հրապարակով անցնողի առջև բացվում է ակնապարար տեսարան: Զինջ կապուտակ ֆոնի վրա հանդիսավոր կանգնած է Կառավարական տունը՝ ողողված պայծառ արևի ճառագայթներով: Շենքի վարդագույն բազմերանգ քարը հուրհրատում է, ծավալները հստակ են ու որոշ, կամարները ձգվել են, սյուները՝ լարվել, զարդաքանդակները բացահայտ երևում են իրենց ողջ հարստությամբ: Այս պահերին Կառավարական տունը թողնում է արտակարգ տպավորություն:

1942 թ. Հայկական ՍՍՀ Կառավարական տան համար Թամանյանին ետմահու շնորհվեց ՍՍՀՄ պետական մրցանակ:

«ՀՍՍՀ պետական թատրոնի<sup>10</sup> (ժողտան) նախագծի հիմնական միտքն է, — գրել է Թամանյանը, — միացնել ձմեռային և ամառային թատրոնները մեկ շենքի մեջ»<sup>11</sup>: Ճարտարապետության կազմավորման հարցում, ի թիվս այլ պայմանների, Թամանյանը կարևոր տեղ էր տալիս կլիմայական պայմաններին, և երկդահլիճ թատրոնի մտահղացման նախադրյալներից մեկը պետք է համարել Երևանի կլիմայական պայմանները, որոնք ամառային թատրոնը դարձնում են անհրաժեշտ: Մի շենքի մեջ երկու ամառային և ձմեռային դահլիճների դասավորումը մի բեմի հանդիպակաց կողմերում, անտարակույս, շահավետ է և նպատակահարմար: Բացի այդ, նման դասավորությունը ավելի մեծ հնարավորություն է ընձեռում ստեղծելու սիմետրիկ հավասարակշռված կոմպոզիցիա ունեցող, արտահայտիչ ճարտարապետական ծավալատարածական լուծումներ, քան թատերական շենքերի հանրահայտ սխեմաները:

Թատերական նոր տիպի շինության իր մտահղացմանը Թամանյանը ճարտարապետական հետաքրքիր մարմնավորում է տվել: Բեմի հանդիպակաց

<sup>10</sup> Թատրոնի այս շենքը հետագայում հատկացվեց Օպերայի և բալետի թատրոնին և Համերգային մեծ դահլիճին:

<sup>11</sup> «Ալեքսանդր Թամանյան...», էջ 61:



Նկ. 3

կողմերում դասավորված կիսաշրջանաձև երկու դահլիճները միավորված են աստիճանաձև փոքրացող օվալաձև տարածության մեջ, որի կենտրոնում բարձրանում է բեմի ծավալը: Շնորհիվ շենքի յուրահատուկ կոմպոզիցիայի, դահլիճները լուսավորվում են բնական լույսով, որը դրեթե անհնար է թատերական շենքերի տրադիցիոն կոմպոզիցիաների դեպքում:

Ժողովրդական մեծ տոների, հանդեսների ժամանակ, ըստ հեղինակի մտահղացման, հնարավոր էր երկու դահլիճները միացնել: Այդ դեպքում նրանց միջև գտնվող և թատերական բոլոր հարմարություններն ունեցող ու մեքենայացված բեմը, դահլիճների շրջվող պարտերների հետ, պիտի դառնար մի մեծ հրապարակ, իսկ երկու ամֆիթատրոնները միասին՝ երեք հաղարից ավելի տեղ ունեցող մի մեծ հանդիսարան (դահլիճների այս ձևափոխությունը, ցավոք, չի իրականացվել): Ըստ նախագծի, ամառային թատրոնի<sup>12</sup> ճակատի միջսյունային տարածությունները բաց էին, շկար ապակեպատում: Այսպիսով ամառային թատրոնը տարածականորեն կապվելու էր շենքը շրջապատող պուրակի հետ, որ պիտի լիներ ամառային թատրոնի ճեմասրահ<sup>13</sup> բաց երկրնքի տակ: Պուրակը, միևնույն ժամանակ, շենքի համար ստեղծում է ցանկալի միջավայր և համապատասխան ֆոն: Շենքի կոմպոզիցիայում տեղ էին ունենալու մոնումենտալ և դեկորատիվ արվեստները (արձաններ, քանդակներ, որմնանկարներ): «Ճարտարապետության ծաղկման համար,— գրում էր Քամանյանը,— շափազանց բարեհաջող հանգամանք է հանդիսանում այն, որ մոնումենտալ կառուցումները հնարավորություն են տալիս ճարտարապետության հետ համադրել քանդակագործություն և դեկորատիվ նկարչություն: Երեք արվեստի (ճարտարապետություն, քանդակագործություն և նկարչություն) համադրությունը կտանի շինարարական արվեստը դեպի ծաղկում»<sup>14</sup>:

Ինչպես տեսնում ենք, այս կառուցվածքը թատերական շենք չէ ավանդական առումով, այլ նոր տիպի հասարակական մասսայական բնույթի շինություն, ուր, բացի թատերական ներկայացումներից, կազմակերպվելու էին ժողովրդական տոներ, հանդիսավոր հավաքներ և ժողովներ:

1937 թ. Փարիզի համաշխարհային ցուցահանդեսում թատրոնի՝ Ժողտան նախագծին շնորհվել է Ոսկե Մեծ մեդալ (Grand prix):


Թեև Քամանյանի այս նախագիծը լիակատար իրականացում չունեցավ, այնուամենայնիվ ներկա շենքը թողնում է մեծ տպավորություն. հոյակապ է նա իր ամբողջությամբ և պարզությամբ, քանդակագործական երկին հատուկ արտահայտչական ուժով, հատակագծային և տարածական-ծավալային լուծումի միասնությամբ: Կանաչ զանգվածով շրջապատված, շրջակա տարածության և կառուցապատումի վրա իշխող մոնումենտալ այս շինությունը հիացմունք է առաջացնում իր միասնական և հաստատուն ծավալով, հանդիսավորությամբ, ներդաշնակ և նուրբ համաշափություններով (նկ. 4):

Կառավարական տունը և օպերայի թատրոնի շենքը, ինչպես վերը նշվեց, մտահղացումով և բովանդակությամբ նոր տիպի կառուցվածքներ են, ունեն

<sup>12</sup> Հետագայում, շինարարության ընթացքում, ամառային թատրոնը վերափոխվեց ու դարձավ համերգային Մեծ դահլիճ և այս պատճառով նախագծում համապատասխան փոփոխություններ կատարվեցին:

<sup>13</sup> Այս է պատճառը, որ համերգային Մեծ դահլիճը ճեմասրահ չունի:

<sup>14</sup> «Ալեքսանդր Քամանյան...», էջ 45:



նորարարական մի շարք կողմեր և լուծումներ: Հայ ճարտարապետության լավագույն ավանդույթները և կենսունակ ձևերը այստեղ կիրառված են ստեղծագործական այնպիսի վերամշակումով, որ ստացել են այժմեական հնչեղություն: Հայ գասական ճարտարապետության ծավալատարածական և տեկտոնիկ առանձնահատկությունները Թամանյանի այս տիպի գործերում ստացել են արդիական մեկնաբանություն: Նույնը կարելի է ասել մեր ճարտարապետությանը բնորոշ մանրամասները շկրկնելու և բազմազան ձևավերով մշակելու, ինչպես նաև կոնստրուկցիայի ու զարգաբանդակի փոխադարձ կապի սկզբունքների վերաբերյալ: Ինչպես վարպետի մյուս գործերում, այս շենքերում ևս ճարտարապետական ձևերը ճշմարիտ են և օրգանական, պայմանավորված կոնստրուկտիվ միջոցներով և հիմնական շինանյութի՝ քարի հատկություններով: Ծարտարապետական այս երկերը գրավում են իրենց գեղարվեստական մեծ ուժով և ընդհանրապես օժտված են այնպիսի արժանիքներով, որոնք հատուկ են միայն ճարտարապետության դասական ստեղծագործություններին:

Թատրոնի շենքի ու կառավարական տան ստեղծման պատմությանը ծանոթանալիս պարզվում է, թե ինչպես է վարպետ ճարտարապետը հասել կատարելության, ինչպես տարբերակից տարբերակ հետզհետե մշակվում, վերջնականապես ավարտուն մարմնավորում է ստանում նրա մտահղացումը և ինչպես ճարտարապետական ձևերը դառնում են կատարյալ: Պարզվում է նաև, թե ստեղծագործական ինչպիսի մեծ ճանապարհ է անցել նա՝ սկզբնական մտահղացումից մինչև վերջնական տարբերակը, համառ աշխատանքի, անդուլ որոնումների և կատարելության մի ճանապարհ:

Այս երկու գործերում հատկապես երևում է Թամանյանի ստեղծագործության նորարարական բնույթը: Ծարտարապետը այս շենքերը նախագծելիս խորապես ընկալած է եղել և աչքի առաջ է ունեցել մեր կյանքի պահանջները, համարձակ վերամշակել է ազգային ճարտարապետության կենսունակ ձևերը: Չի սահմանափակվել հայ ճարտարապետության ավանդույթներով, ստեղծել է ճարտարապետական նոր ձևեր, հմտորեն կիրառել ժամանակի շինարարական տեխնիկայի հնարավորությունները: Եվ այս բոլորի արդյունքը եղան նոր տիպի շենքեր՝ ժողովրդին հարազատ, հասկանալի:

Ծանոթանալով Թամանյանի կյանքին և ստեղծագործական աշխատանքին, տեսնում ենք, թե որքան բազմազան է եղել նրա գործունեությունը: Մեծ վարպետը միաժամանակ աշխատել է իր մի շարք նախագծերի վրա, ղեկավարել է արվեստանոցը, ամեն օր եղել է կառուցվող շենքերում, անձամբ հետևել է շինարարությանը: Նա միաժամանակ գլխավորել է հնությունների պահպանության կոմիտեն, եղել է Հայաստանի կերպարվեստի աշխատողների ընկերության նախագահ, պաշտոնավարել է Ժողկոմխորհում, Պետպլանում (որպես բաժնի ղեկավար), գլխավորել է տարբեր հանձնաժողովներ: Եվ դա հնարավոր էր միայն այն զարմանալի աշխատունակության և կազմակերպվածության շնորհիվ, որ ուներ Թամանյանը:

Որպես լայն ճանաչում գտած արվեստագետ և հասարակական գործիչ 1925, 1929, 1931, 1935 թթ. նա ընտրվել է Հայաստանի Կենտգործկոմի անդամ: Ականավոր ճարտարապետը իր գործուն մասնակցությունն է բերել Հայաստանի առաջին գլխավոր կենտրոնների՝ Գիտության և արվեստի և ապա՝ Գիտություն ինստիտուտների աշխատանքներին, լինելով նրանց իսկական

անդամը: Թամանյանի արվեստանոցում տարբեր ժամանակ աշխատել են շատ ճարտարապետներ: Այդ արվեստանոցը մի իսկական մեծ դպրոց է եղել երիտասարդ մասնագետների համար:

Թամանյանը ճանաչվել է որպես սովետական ճարտարապետության խոշորագույն վարպետներից մեկը, նրա ստեղծագործությունը բարձր է գնահատվել միութենական ճարտարապետական գիտության և հասարակայնության կողմից:

Նրա առաջադրած ճարտարապետական խնդիրները, որոնք փայլուն լուծում են ստացել իր իսկ ստեղծագործության մեջ, այժմեական են նաև այսօր:

Մեծ վարպետի ավանդները ստեղծեցին ճարտարապետական մի դպրոց, որն ամենայն իրավամբ կոչվում է Թամանյանական:

#### АЛЕКСАНДР ТАМАНЯН

(К 100-летию со дня рождения)

Л. С. ЗОРЯН

(Резюме)

Статья посвящена творчеству выдающегося армянского архитектора Александра Таманяна. Охарактеризованы его наиболее важные проекты и постройки, деятельность Таманяна как архитектора и организатора строительного дела в Советской Армении. Показано значение Таманяна как крупнейшего мастера зодчества, зачинателя новой армянской архитектуры. Особо говорится о таких его работах, как проект планировки Еревана, здание первой ереванской гидроэлектростанции, Дом Правительства Армянской ССР и здание театра оперы и балета,—произведениях, имевших большое значение для развития советской армянской архитектуры.